

ՏԱՐԱՍ ՇԵՎՋԵՆԿՈՆ ՀԱՅ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ռանաս. գիտ. դոկտոր Ս. Գ. ԱՐՆՇՅԱՆ

Երողը համաշխարհային ճանաչում է ձեռք բերում այն ժամանակ, երբ դառնում է ժողովրդի խորհրդանիշը, նրա դրոշմը Շեչենկոն անբաժան է Ուկրաինայից, նրա մշակույթից, նրա պատմությունից: Ինչպես որ անկարելի է պատկերացնել Ուկրաինան առանց Շեչենկոյի, այնպես էլ անհնարին է խոսել Ուկրաինայի ու Հայաստանի մշակութային և դրական հարաբերությունների մասին՝ առանց նկատի ունենալու, որ Տարաս Շեչենկոն կենտրոնական դեմքերից մեկ էր այդ հարաբերությունների պատմության մեջ:

Հայ ժողովրդի մտավոր կյանքի մեջ հաստատապես մտած ուկրաինական գրողներից առաջին տեղը, անտարակույս, պատկանում է նրան: Ըստ երևույթին եղբայրական երկու ժողովուրդների՝ հայերի և ուկրաինացիների մշակութային հարաբերությունների հինավուրց ավանդները մեծապես նպաստել են հանճարեղ Կորզարի ստեղծագործություններն ընկալելուն ու տարածելուն: Իայց ճիշտ չէր լինի խոսել մշակութային ավանդների մասին՝ նախ և առաջ նկատի չունենալով հեղափոխական ավանդները, համատեղ պայքարը հանուն ժողովրդի ազատության ու երջանկության:

Անցած դարում ազատագրական պայքարի դրոշմ բարձր է պահել տարրերը ազգությունների հեղափոխական դեմոկրատիան: Մի ամբողջ դարաշրջան էր դա ժողովուրդների զարգացման պատմության մեջ և կյանքի բազմապիսի կողմերն ընդգրկելու, ինչպես և նրա հետևանքների տեսակետից այն կարելի է համեմատել, թերևս, միայն Վերածնության դարաշրջանի հետ: Հնարավոր է նաև, որ մենք բավականաչափ չենք խորհել հեղափոխական դեմոկրատիայի վերաբերյալ լեհիկյան ասույթների վրա և լիովին չենք գիտակցել այդ դարաշրջանի նշանակությունը՝ որպես ժողովուրդների կյանքում կատարված զարգացման վերին աստիճանի կարևոր մի փուլի: Անմահ են հեղափոխական դեմոկրատների փայլուն համաստեղության գործիչների անունները. Զերնիշևսկի, Դորոույուբով, Գերցեն, Տ. Շեչենկո, Մ. Նալբանդյան, Ն. Նիկոլաձե, Խրիստո Բոտև, ինչպես նաև ուրիշներ, որոնց անունները չեն հասել մեզ: Սրանցից շատերը ճանաչում էին իրար, բարեկամներ էին, շատերն էլ միմյանց չեն հանդիպել, սակայն պատմական բախտի ընդհանրությունը որոշել է նրանց կենսուղիների ընդհանրությունը: Այդպիսի ընդհանրություն, անտարակույս, գոյություն է ունեցել Շեչենկոյի ու Նալբանդյանի միջև: Ծվ դա հեղափոխական դեմոկրատիայի գաղափարախոսության ու հեղափոխական-դեմոկրատական գրականության զարգացման ընդհանուր օրինաչափությունների արտահայտությունն էր:

Նալբանդյանն ու Շեչենկոն շատ վաղ էին ճանաչել այն նեղություններն ու դժվարությունները, որոնց մեջ աշխատավորները հարկադրված էին գոյություն պահպանել ու պայքարել ցարական դժնդակ իրավակարգի դեմ:

Այն ժամանակ, երբ ուկրաինացի Շեչենկոն տառապում ու հալումաշ էր լինում Օրենբուրգյան երկրամասի անապատներում, հարկադրական անգործության մատնված, Նալբանդյանը ուրիշների հետ շարունակում էր ազատագրական շարժման գործը:

Շեչենկոյի ու Նալբանդյանի կենսուղիների նմանությունը կանխորոշված էր այն տեղով, որը զրավել էին նրանք իրենց ժողովուրդների պատմության մեջ, այն միասնական խնդիրներով, որ առաջադրում էին նրանք ազատագրական շարժմանը:

Փիլիսոփայական նախադրյալների ու աշխարհայացքի ընդհանրությունը Շեչենկոյի ու Նալբանդյանի մոտ կանխորոշված էր անցյալի մշակութային ժառանգության նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքով և համաշխարհային գրականության տրադիցիաների ընկալմամբ:

Լինելով ազգային մշակույթի մարտիկներ՝ նրանք սերտորեն կապված էին նրա հոգևոր հարստություններին: Ժողովրդի բանաստեղծական սիրտը, փիլիսոփայական մտքի ավանդները, լեզուն, Շեչենկոյի, ինչպես նաև Նալբանդյանի համար առաջնակարգ նշանակություն ունեցող երևույթներ էին: Նալբանդյանը բազմիցս գրել է լեզվի հարցը: Նա գրել է. «...ցաւ է ինձ խոստովանել աստանօր, թէ պատուելի իմաստունք մի: ղեռ ոչ կաշեն հասկանալ՝ թէ ասացեալն Ազգ չէ, այլ ինչ, եթէ ոչ լեզու, առանց որոյ չէ մարթ լինել ազգի. նա հոգի է ազգի, և ազգ մարդկան առհասարակ նովաւ կեայ»: Շեչենկոյի ու Նալբանդյանի գործունեությունը բացառիկ դեր է կատարել ազգային լեզվի ձևավորման մեջ: Սակայն ազգային մշակույթի ավանդներից ոչ պակաս Նալբանդյանի ու Շեչենկոյի սրտին մոտ էին նաև ողուս գրականության ու մշակույթի ավանդները: Երկուսն էլ կոփվել էին ողուսական հեղափոխական-դեմոկրատական մտքի դարբնոցում: Այս տեսակետից խիստ հետաքրքիր է, որ երկուսն էլ անվերապահորեն ընդունում էին գրականության զոգույան ուղղությունը, և ոչ միայն Բելիինսկու ու Զերնիշևսկու հետ պաշտպանում էին դա, այլև ողուսական ուսուցիչը հռչակում էին որպես համաշխարհային գրականության զարգացման ճիշտ ու նպատակահարմար ուղին: Նալբանդյանի համար Գուգոյի հետ համեմատելի գրականության զարգացման բարձրագույն աստիճանին պատկանելու շափանիչ էր: Հաճախ է Շեչենկոն վերադարձել Գուգոյին: Նշելով Սալտիկով-Շչեդրինի և Գուգոյի նշանակությունը՝ Շեչենկոն գրում էր. «Նա խոնարհվում եմ Սալտիկովի առջև: Ո՛վ Գուգոյ, մեր անմահ Գեգոյ»: Բայց Գուգոյը նրա ու Նալբանդյանի միակ բարեկամը չէր: Պակաս հափշտակությամբ չէին վերաբերվում երկու հեղափոխական մեծ դեմոկրատները նաև Պուշկինին ու Լերմոնտովին:

Սակայն մշակութային ժառանգության ու ավանդների հարցը թե՛ Շեչենկոյի, թե՛ Նալբանդյանի մոտ չի սպառվում ազգային ավանդներով. դա համաշխարհային ֆոն ունեցող մի հարց է, որի վրա էլ հնչում էր ազգային մշակույթի թեման: Դա ևս մի ապացույց է, որ և՛ Շեչենկոն, և՛ Նալբանդյանը դրանք ընդունում էին իրենց ժամանակի հասարակական կյանքի առաջավոր դիրքերում:

Տարակույս չկա, որ Շեչենկոն քաջածանոթ էր եվրոպական գրականության՝ Շեքսպիրին, Բայրոնին, Դանթեին, Գյոթեին, Շիլլերին, Բալզակին և ուրիշ շատերի: Գրողների նույն կաճառն էր գտնվում նաև Նալբանդյանի տեղադրությունում, որ երևում է նրա հետևյալ տողերից. «Հարգել և պատվել հանճարը և բանականությունը ուսած լինելով վաղուց, անունից երկյուղ չունինք»:

ոչ Ռուսսոյի և ոչ Վոլթեռի, այո՛, պարտական իսկ ենք մեծարել և հարգել հանճարը և բանականությունը, այն աստվածային քուրաները, որոնցից առաջին անգամ դուրս թռան ազատության կայծերը:

Այո՛, գիտենք հարգել ոչ միայն Օուենը, Պրուդոնը, Ֆուրիեն ու Ֆոհթը, այլև Շիլլերը, Գյոթեն, Ֆիհտեն, Քանթը և Հեգելը, ճնշված մարդկության այն անմահ բարեկամքը...»:

Հարցի էությունն այն է, որ համաշխարհային մշակույթը ճանաչելու և նախադրյանի, և՛ Շեչենկոյի համար ժողովրդին ծառայելու, ազգային մշակույթը ստեղծելու ու ձևավորելու միջոցներից մեկն էր:

Սակայն ընդհանրություն կար ոչ միայն տրադիցիաներն ընկալելու, այլև զեղարվեստական մեթոդի մեջ, որ կանխորոշված էր գաղափարական ու փիլիսոփայական նախադրյալներով: Մատերիալիստական փիլիսոփայությունը, աթեիզմը, բնագիտության պրոպագանդան հեղափոխական երկու մեծ մտածողների աշխարհայացքի անկյունաքարերն էին: Բացի այդ, նրանց համար տեսությունը կյանքից կտրված չէր սպեկուլյատիվ դատողություններով, այլ քաղաքական սուր պայքարի օրգանական մասն էր: Փիլիսոփայական մտքի ընդհանրությունը միաժամանակ և զեղագիտական սկզբունքների ընդհանրությունն էր:

Զերնիշկսկին ուսական, Շեչենկոն ուկրաինական, նախադրյանը հայ հասարակական մտքում հետևողական պայքար էին մղում «մաքուր արվեստի» տեսարանների դեմ՝ հանուն ռեալիզմի: «Արվեստի էսթետիկական վերաբերմունքը իրականությանը առավել լրիվ արտահայտում էր հեղափոխական դեմոկրատիայի հայացքները արվեստի մասին, սակայն տարբեր ազդույթունների գաղափարախոսները, իրենց քաղաքական համոզմունքներում միակամ լինելով հանդերձ, այդ հայացքները զարգացնում էին իրենց հարազատ, ազգային արվեստի նյութերի հիման վրա: Օրինակ, խոսելով կյանքը գրականության մեջ արտացոլելու մասին, նախադրյանը ամենից առաջ շեշտում էր ազգային կյանքի արտացոլումը: Նա գրում էր. «Ազգային սեփական դպրությունը էապես հիմնվում է ազգային բանաստեղծության վրա և այնպիսի աշխատությանը, որ հայկական հոգու բղիժվածքը լինելով հայ ազգին էին վերաբերում դարձյալ»¹:

Բայց նախադրյանը կանգ չէր առնում դժուար վրա և ցույց էր տալիս, որ ազգային ստեղծագործությունները դառնում են համամարդկային. «Ընդհանուր մարդկային գիտության վերաբերյալ գրքերը, թեև այո՛, մեծ պատիվ են բերում մի ազգի, եթե սա հարուստ էր այդպիսիներով, այնուամենայնիվ այդ գիտությունը մի որևիցէ ազգի սեփականությունը չեն, այլ բովանդակ մարդկության, թեև նոցա մշակողը միայն մի քանի առաջադեմ ազգեր եղած լինեին»²:

Շեչենկոն նույնպես զեղագիտական սկզբունքների, համաշխարհային արվեստի մասին խոսելիս, նկատի ուներ նախ և առաջ իր հայրենի ուկրաինական գրականությունը: Խիստ կարևոր է, որ ուկրաինական մեծ բանաստեղծը առանձնապես ընդգծում էր բնության օրինաչափությունների արտացոլումը արվեստի մեջ. «Ինձ թվում է, — գրում էր նա, — թե ազատ արվեստագետը նույնքան

¹ Մ. Նախադրյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, Երևան, 1940, էջ 113.

² Նույն տեղում:

սահմանափակված է իր շրջապատի բնությամբ, որքան բնությունն է սահմանափակված իր մշտնջենական, անփոփոխ օրենքներով»³։

Բայց և այնպես ճիշտ չէր լինի խոսել միայն բնդհանրությունների մասին։ Գեղարվեստական ստեղծագործությունն այնքան բարդ բան է, որ բնդհանրություններ եղած տեղերում անխուսափելիորեն կան և տարբերություններ։ Այդ տարբերությունները ցայտուն են դառնում, երբ խոսքը վերաբերում է գրական ժանրերին։

Գեղարվեստական Ֆելիոյի բնդհանրություններում Հակաբնականություն ունի թեմատիկան՝ Փն՝ Շենեկոյի և թե՛ Նալբանդյանի ստեղծագործության։ մեջ առաջատար թեման դասակարգային ու քաղաքական ճշման դեմ ուղղված ազատագրական պայքարն է։ Ազատության թեման բարձր հնչեց Նալբանդյանի քաղաքական պոեզիայում՝ «Ազատություն» բանաստեղծության մեջ, որը գրված է որպես արձագանք Օգարյովի համանուն բանաստեղծությանը։

Հեղափոխական դեմոկրատիայի պոեզիան բոլորովին նոր երևույթ էր գրականության պատմության մեջ։ Այդ պոեզիայի ծագումը տանում է մեզ դեպի 1848 թ. հեղափոխական իրադարձությունները ու Հայնրիխ Հայնեի ստեղծագործությունները, Բերանթեի երգերը։ Դա կյանքի ճշմարտության վրա հիմնված ուժանտիկ պոեզիա էր։ Հեղափոխության զրոշների վրա փոփոխացող այդ պոեզիան Արևմուտքից շարժվում էր դեպի Արևելք։ Նեկրասովի, Շենեկոյի, Նալբանդյանի հեղափոխական ուժանտիկան արտահայտությունն էր ժողովրդական զանգվածների մեծագույն զարթոնքի, այդ զանգվածներում հասունացած բողոքի ու նրանց քաղաքական ակտիվության։ Ամբողջ ձայնով պահանջվում էր ստրուկին ևս մարդ բնությունել, գինված պայքարի ելնել մարդու համար, հանուն մարդու։ Այս կոչը արտակարգ ցայտունությամբ արտահայտվեց Շենեկոյի պոեզիայում։

Շենեկոյի ու Նալբանդյանի ստեղծագործության մեջ համաշխարհային հեղափոխական պոեզիայի ավանդները խաչաձևվեցին հայրենի գրականության և ամենից առաջ երգի, խոհի, զրույցի ավանդների հետ։ Եվ Շենեկոյի «Խոհերը» անմիջական արձագանք էին գտնում Նալբանդյանի խոհերում, հայրենի տարերքում իրար էին մոտենում կորգարը և աշուղը։ Պոեզիայի ու ֆուլյորի կապը հեղափոխական շարժման գողափարական ափսոսանքներին էր։

Ապագայի մասին խոսելիս և՛ Նալբանդյանը, և՛ Շենեկոն հույս ունեին, թե գալիք հասարակության մեջ կտեսնեն ազգային հարցը ճիշտ լուծված։ Այս հարցը ուկրաինական ու հայ ժողովուրդներին միավորում էր պատմության քառուղիներում։ Ուկրաինացիների երկարատև պայքարը լեհական շլախտայի և օսմանյան տիրակալության դեմ պակաս ծառեր չէր, քան հայ ժողովրդի պայքարը այն դաժան նվաճողների՝ պարսիկների, արաբների ու թուրքերի դեմ։

³ Тарас Шевченко. Собр. соч., т. V, М., 1949, стр. 104.

որոնք ամենակուլ լավայի նման հեղեղում էին հայոց աշխարհը՝ ավեր ու մահ սփռնելով իրենց շուրջը:

Այդ պայքարում անկասկած դրական դեր կատարեց ռուս ժողովուրդը. պատմական բացառիկ նշանակություն ունեցող ազատ հանդիսացավ Ուկրաինայի և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Սակայն ազգային հարցը չէր կարող լուծվել ցարիզմի բռնակալական կարգերում: Ռուսաստանը «ժողովուրդների բանտ» էր, և հեղափոխական դեմոկրատները բոլոր ժողովուրդների հեղափոխական ճիգերի համախմբման մեջ էին տեսնում ազգային հարցի լուծման ուղին:

Հեղափոխական դեմոկրատները սովորեցնում էին մասսաներին, որ արտաքին ճնշողներից բացի, նաև ներքին թշնամին՝ տիրապետող դասակարգերը պետք է ենթարկվեն մշտական գնդակոծության և այդ ներքին թշնամուն՝ ոչնչացնելուց հետո միայն հնարավոր է ազգային ազատագրությունը: Այս տեսակետից խիստ հետաքրքրական է Գերգինի ու Գարիբալդիի միջև տեղի ունեցած նամակադրությունը: Գարիբալդին 1863 թ. 23 դեկտեմբեր թվակիր նամակում գրում էր Գերցենին. «Իշխանությունները միշտ էլ օգտվել են ազգության ու կրոնի նախապաշարմունքներից՝ իրենց նկատառումների համար՝ դրանցով թունավորել են ժողովուրդների հղբայրական կապը: Հենց ժողովուրդների բարեկամական կապը պետք է ապահովեր նրանց ազատագրումը»:

Քաղաքական սուր ընդհանրումներում հեղափոխական դեմոկրատները բուկրդրոնքային ու հետևողական պայքար էին մղում բուրժուական նացիոնալիզմի դեմ: Նալբանդյանը մարտնչում էր Զամուրձյանի ու նմանների դեմ: Բուրժուական նացիոնալիստներ Ն. Կոստոմարովը, Պ. Կուլիշը և ուրիշներ փորձում էին կեղծել Շեչենկոյի դրական ժառանգությունը: Ե՛վ Շեչենկոն, և՛ Նալբանդյանը իրենց կյանքը նվիրեցին ցարական ինքնակալության դեմ մղվող պայքարին, անկախ իրենց ազգային պատկանելությունից, բայց միաժամանակ և պայքարում էին Ուկրաինան ու Հայաստանը ազգային ճնշումից ազատագրելու համար: Ե՛վ Շեչենկոն, և՛ Նալբանդյանը՝ մարդկության ապագան տեսնում էին ժողովուրդների համերաշխ բնտանիքում:

Եթե Նալբանդյանը երազում է ազատ տեսնել Ուկրաինան, ապա Շեչենկոն ևս ուզում էր ազատ տեսնել Կովկասն ու նրա ժողովուրդներին:

Փաղափարական նույն նախադրյալներից բխող թեմատիկ ընդհանրությունը մերձեցման բազմաթիվ կետեր ունի Շեչենկոյի ու Նալբանդյանի մոտ: Ընշողների մերկացում, կնոջ ազատագրություն, լուսավորության տարածում. ահա հարցեր, որոնք ոչ միայն արծարծում էին մեծ դեմոկրատներն իրենց երկերում, այլև լուծում էին կատարյալ համամտությամբ:

Փեղարվեստական մեթոդի ընդհանրությունը ուղղվում էր այն տեղով, որ գրավում էին Շեչենկոն ու Նալբանդյանը հայրենի, ապստ և համաշխարհային

* „Колокол“, 1864, № 178, էջ 14611

գրականության մեջ: Շեչենկոն ու Նալբանդյանը հանդիսացան ռեալիզմի հիմնադիրները ուկրաինական ու հայ գրականություններում: Եվ որպես ռեալիստ էլ մտան նրանք համաշխարհային գրական պանթեոնը: Ռեալիզմի բուռն զարգացումը Արևմուտքում, Ռուսաստանում, որի մասնակի դրսևորումը հանդիսացավ բնական պարոդը, առանձին ժողովուրդների համար XIX դարի խոսքն էր: Նալբանդյանի և Շեչենկոյի ստեղծագործությունը զարգացավ համաշխարհային ռեալիզմի այս շրջագծում:

Այս տեսակետից հետաքրքրական է մանավանդ արձակը: Շեչենկոյի արձակը համեմատաբար լավ է ուսումնասիրված: Ակադեմիկոս Ա. Ի. Բելյեցկու, թղթակից անդամ պրոֆ. Ն. Գ. Կիրիլյուկի, թղթ. անդամ Ե. Ս. Շարիփովսկու, պրոֆ. Դ. Վ. Չալիի, Ս. Է. Դմոխովսկու, Ն. Ֆ. Բելչիկովի, Մ. Շահինյանի և շատ ուրիշների աշխատությունները լույս են սփռում ոչ միայն Շեչենկոյի արձակի ինքնատիպության, այլև ռուսական վիպագրության հետ ունեցած նրա կապի, հեղինակի ստեղծագործական մեթոդի շատ առանձնահատկությունների վրա: Մշակվել են նաև Նալբանդյանի արձակի հետ կապված բազմաթիվ հարցեր⁵: Շեչենկոյի ու Նալբանդյանի զեղարվեստական արձակի ընդհանրությունն այնքան նշանակալի է, որ Շեչենկոյի արձակի վրա կատարված հետաքրքիր շատ զննումներ օրինական են նաև Նալբանդյանի արձակի համար, այսպես՝ ինքնակենսագրական տարրը, որ Շեչենկոյի վիպակներում նկատել են Ա. Բելյեցկին, Ս. Դմոխովսկին, Ն. Բելչիկովը և ուրիշներ, որպես նրա զեղարվեստական մեթոդի առանձնահատկություններից մեկը, առկա է նաև Նալբանդյանի «Մեռելահարցուկ» վեպում: Ն. Բելչիկովի այն հավաստումը՝ թե Շեչենկոյի վիպակներում կերպարներ ստեղծելու միջոցը դիալոգն է և ներքին մենախոսությունը, իրավացի է նաև Նալբանդյանի արձակի համար:

Եվ Շեչենկոն, և՛ Նալբանդյանը հիանալի հասկանալով ազգային մշակույթի նշանակությունը՝ անգնահատելի ավանդ մուծեցին նրա զարգացման մեջ: Այդ հանճարեղ ճարտարապետները ընդհուպ մոտեցան ազգային մշակույթի փառահեղ տաճարի կերտմանը: Եվ հետագա սերունդներն ըստ արժանվույն զնահատեցին Շեչենկոյի ու Նալբանդյանի անձնուրաց հայրենասիրությունը. նրանց կյանքը մի մասնիկը կազմեց այն հիմքի, որի վրա աճեց ու զարգանում է կոմունիզմի մշակույթի հոգևոր հրաշագեղ կառուցվածքը:

Տարաս Շեչենկոն հաստատուն տեղ է գրավել հայ ժողովրդի մտավոր կյանքում: Նախ և առաջ Նշենք, որ Շեչենկոյի երկերը հայերեն լույս են թափվում համարյա հարյուրամյա պատմություն ունի: Անցած դարի 70-ական թվական-

5 Տե՛ս Ո. Գ. Արեշյան, Որ. Նալբանդյանի զեղարվեստական արձակը և «Հյուսիսափայլ»-ի ռեալիստական դպրոցը, 1938, Ա. Տեքտերյան, Նալբանդյանի էսթետիկան, 1939, և. Ուրդրոյան, Որ. Նալբանդյանի գրական հայացքները, 1940:

6 Н. Ф. Бельчиков, Проза Шевченко, Изв. АН СССР, Отд. лит. и яз., 1961, том XX, вып. 3, էջ 190.

ներից Շևչենկոյի ստեղծագործությունները տպվում էին հայ պարբերական մամուլում 1879 թ. Շևչենկոյի ծայր հնչեց հայերեն Ադրիատիկ ծովի կապուտակ ջրերով ողողվող ափերի վրա: Թարգմանիչ Ք. Քուշներուսնո ընտրել էր Շևչենկոյի «Միանձնուհի Մարիանան» պոեմի մի հատվածը ու հրատարակել «Մարիանա» վերնագրով: Նույն թվականին տպվեց «Գամալիա» բանաստեղծության թարգմանությունը: Այս երկու ստեղծագործությունները մի անգամ ևս հայերեն թարգմանվեցին 1904 թ.:⁵ հեղափոխական փոթորկի նախօրյակին:

Շևչենկոյի ստեղծագործությունները լույս էին տեսնում հայ մամուլում՝ չնայած գրաքննության արգելքներին: Ցարական գրաքննությունը հետևողականորեն հետապնդում էր առաջավոր գրականության տարածումը՝ անկախ նրա ազգային պատկանելությունից: Գրաքննությունն ու ժանդարմական վարչությունը ջանում էին շիկացած երկաթով ջնջել ոչ միայն Զերնիշևսկու, Գերցենի, այլև Նալբանդյանի, Շևչենկոյի և տարբեր ժողովուրդների առաջադեմ ներկայացուցիչների աշխատությունները: Հատկանշական է, որ գրաքննական կոմիտեի արխիվային մի թղթապանակում կողք-կողքի պահպանվել են երկու վավերագիր՝ Ռաֆայել Պատկանյանի երկերի արգելումը և «Հայդամակներ»-ի մասին մի շրջաբերական, որտեղ ասված է. «Անհրաժեշտ համարելով մոտակա ժամանակի համար արգելել Տ. Շևչենկոյի «Հայդամակներ» պոեմի մալուուսյան բարբառով և առանձին հրատարակությամբ լույս ընծայելը՝ մամուլի գործերի գլխավոր վարչությունը հայտնում է ի պատշաճ դեկավարություն գրաքննչական կոմիտեների և ներքին գրաքննության առանձին պարոնայք գրաքննիչների»: Այդ նույն միջոցին Գաբրիել Սունդուկյանը դառնությամբ գրում էր. «Այսպես է մեր բախտը. մեզ հալածում են, մեզ տանջում, պլուկում են մեր կաշին, խլում մեր կյանքը և իրավունք չեն տալիս անգամ մի բառ արտաբերելու»:

Եվ այնուամենայնիվ այդ բառը թափանցում էր մամուլի մեջ, տեղ գտնում բազմաթիվ հայերեն հանդեսների ու թերթերի էջերում, աշխարհի գրեթե բոլոր երկրներում տպվում էին Շևչենկոյի երգերի թարգմանություններ, հոգվածներ լույս տեսնում նրա կյանքի ու գործունեության մասին: Այդ բազմազգի ու բազմալեզու մամուլից անհրաժեշտ է առանձնացնել բոլշևիկյանը, որը լենինի գլխավորությամբ հետևողական ու սկզբունքային պայքար էր մղում հանուն գրական ժառանգության և արդիական գրողների, ինչպես Գորկին, Տոլստոյը, Շևչենկոն...

Հայ մամուլում Շևչենկոյի նկատմամբ հետաքրքրությունն ավելացավ 1905 թ. հեղափոխության կապակցությամբ և ապա 1911 թ., երբ նշվում էր Շևչենկոյի մահվան հիսնամյակը: Այդ ժամանակ Շևչենկոյի գրական ժառանգության շուրջը բանավեճ ծագեց, և բոլշևիկներն ստիպված եղան հանդես գալ այդ հիանալի բանաստեղծին աղավաղելու և գոհակացնելու դեմ: Սուրեն Սպանդարյանը դայրույթով դրել է. «...Ժողովրդական բեմը վերածել կաֆե-շանտանի. և այդ գոհակությունը կատարվում է ուկրաինական մեծ բանաստեղծ, Տ. Շևչենկոն...»:

վշտակիր բանաստեղծ, ժողովրդական կորդար Տարաս Շեչենկոյի հիսնամյակի օրը: Ահա այդպես մեծարեցին հանճարեղ ճորտ արվեստագետի և գրողի հիշատակը»:

Այդ նույն ժամանակ «Տարագ» հանդեսում լույս տեսավ՝ Հովակիմ Սոլովյանի «Ուկրաինական Պրոմեթեոս» վերնագիրը կրող հոդվածը: Մեծապես հետաքրքրական է Սոլովյանի վկայությունը Շեչենկոյի ու հայերի բարեկամության մասին. «Մեզ պատահել է լսել Մանդշլադի հայերից Շեչենկոյի մասին,— գրում է Սոլովյանը:— Հայերը շատ սիրով են վերաբերվելիս եղել բանաստեղծին և գովեստով էին խոսում նրա մասին»:

Մի քանի տարի հետո՝ 1914 թ., Շեչենկոյի ծննդյան 100-ամյակի առթիվ «Հասկեր» շաբաթաթերթի հրատարակեց Աթ. Խնկոյանի «Անմոռանալի Տարաս» վերնագիրը կրող հոդվածը:

Շեչենկոն մտավ սովետահայ կյանքի մեջ որպես լիիրավ ու բաղձալի քաղաքացի: Այժմ արդեն մենք իրավունք ունենք խոսելու շեչենկոյագիտության մասին Հայաստանում: Այդ իրավունքը տալիս են մեզ մեր մամուլում լույս տեսած բաղձաթիվ հետազոտությունները, հոդվածներն ու նյութերը: Հայկական շեչենկոյագիտությունը զարգանում է մի քանի ուղղությամբ: Բավականաչափ հոդվածներ են տպվել մեծ Կորդարի բնահաստի ընդհանուր ու ստեղծագործության մասին: Ա. Կարինյանի, Հ. Սալախյանի, Բ. Քաթոսյանի, Խ. Հովհաննիսյանի, Վ. Դավթյանի և այլոց հոդվածներում հայ ընթերցողի առջև հանում է Ուկրաինայի ականավոր բանաստեղծի կյանքն ու գործունեությունը: Հետազոտությունների մեջ հրապարակված են Շեչենկոյի և հայ մշակույթի ու գրականության կապերն ուսումնասիրելու արդյունքները: Առանձնապես պետք է նշենք Վ. Քերդիրաշյանի աշխատությունները, ուր նա շոշափել է Շեչենկոյի և հայ գրականության կապերի թևան: Աշխատանք է սկսված նաև Բիրլիոգրաֆիա կազմելու ուղղությամբ: Դեռ 1939 թ. փորձ արվեց ի մի հավաքել Շեչենկոյի երկերի թարգմանությունների ու համապատասխան քննադատական դրականության հարուստ նյութը: Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանի կազմած այս հրատարակությունը նկատի է առնված մասսայական ընթերցողի համար. այդտեղ թարգմանությունները ուկրաիներեն ընդգրկելու հետ զուգահեռված չեն, կան նշանակալի բացթողումներ, ուստի և դա չի լուծում հայ շեչենկոյագիտության գիտական բիրլիոգրաֆիայի հարցը: Այնուամենայնիվ դրական դեր է կատարել դա ուկրաինական հանճարեղ բանաստեղծի ստեղծագործությունը մասսայականացնելու գործում:

Մեծ ու արժեքավոր ավանդ են Շեչենկոյին նվիրված ուկրաինացի և այլ հեղինակների հայերեն լույս տեսած հոդվածները: Շեչենկոն հաճախակի հիշատակված է հայ-ուկրաինական դրական կապերին վերաբերող բաղձաթիվ աշխատություններում:

Հասարակական բացառիկ նշանակություն ունեցող փաստ է «Կորդար»-ի հայերեն հրատարակությունը Գեղամ Սարգսյանի թարգմանությամբ: Հայ ընթերցողի սիրված գրքերից մեկը դարձած այդ հատորյակն ունեցել է արդեն երեք հրատարակություն. առաջինը լույս է տեսել 1939 թ. երկրորդը՝ 1954, իսկ երրորդը՝ 1961 թ.: Հատորյակը բաղկում է Ավետիք Իսահակյանի հոդվածով:

Մեծաքանակ են հայ պարբերական մամուլում սփռված Շեչենկոյի երկերի թարգմանությունները, որոնց ուսումնասիրությունը մեր շեչենկոյագիտության կական բաժիններից է: Հատկանշական է, որ այդ երկերը թարգմանել

են ոչ միայն և ոչ այնքան պրոֆեսիոնալ թարգմանիչները, որքան մեր պոեզիայի առաջատար ներկայացուցիչները՝ Գեղամ Սարյան, Նաիրի Զարյան, Սողոմոն Տարոնցի և ուրիշները:

Շեշենկոն հայ աշակերտների սիրած բանաստեղծներից է: Նրանք լավ գիտեն նրա ոտանավորները, անգիր իմանում են «Կտակը»: Երբ դասարանում հայերեն հնչում են Շեշենկոյի ողբերգիկ տողերը, նոր սերունդների շրթների վրա կենդանանում են բանաստեղծի այն մարդարևական խոսքերը, թե իրեն հիշելու են ժողովուրդների ազատ, մեծ բնտանիքում:

Սովետահայ գրականությունը ջերմորեն բնկալեց Շեշենկոյի ստեղծագործությունը և իր խոսքն ասաց նրա մասին: Հովհաննես Խումանյանը Շեշենկոյի հանդեպ ունեցած իր վերաբերմունքով ասես կամուրջ զցեց անցյալի ու ներկայի, ավանդների ու արդիականության միջև: Նա բարձր էր գնահատում ուկրաինական գրականության մեծ վարպետի ստեղծագործությունը: Պալլո Տիշինայի վկայությամբ «Խումանյանը ոչ միայն լավ էր իմանում Շեշենկոյի բանաստեղծությունները, այլև երգում էր դրանք հայերեն: Նրա գրասեղանի վրա էր միշտ «Կորդարը». դրանից նա թարգմանել էր «Մոնշում ու տնքում է Գնեպրը լայնահուն» բանաստեղծությունը, որը և հայերեն երգում էր իր բնտանիքի հետ»: Հայ պոեզիայի վետերաններ Հ. Խումանյանը, Հ. Հովհաննիսյանը և Ա. Խաչակյանը Շեշենկոյի քնարն բնկալում էին որպես հարազատ, սրտամոտ ստեղծագործություն: Ավելին. Բսահակյանը անվանեց նրան «գինված մարդարև»: «Արդարև,— դրել է նա,— Շեշենկոն Ուկրաինայի գինված մարդարևն է. նա պայքարեց ժողովրդի երջանկության համար, նա լուսավորեց ժողովրդի ճանապարհը և առաջնորդեց: Նրա հրեղեն բանաստեղծությունները գինավառեցին ղեպի կոիվ, ղեպի ազատություն: Ամբողջ մի դար իշխում է նա ուկրաինացու զգացմունքների և մտքերի վրա: Շեշենկոն ամեն ինչ է Ուկրաինայի համար: Նա հիմք դրեց նոր գրականության և նոր կենդանի լեզվին: Առանց Ուկրաինայի չի կարելի պատկերացնել Շեշենկոյին և առանց Շեշենկոյի չի կարելի զգալ, հասկանալ Ուկրաինան»:

Շեշենկոյի մասին արտահայտվել են սովետահայ գրականության շատ ներկայացուցիչներ, բանաստեղծները գոյտընկ տողեր են ձոնել նրան: Այդ ձոների մեջ արտահայտվել է և՛ ուկրաինական հանճարի հասարակական ճանաչումը, և՛ նրա հանդեպ տածված սերն ու հարգանքը: Մեր երկրի ժողովուրդների զգացումներն ու մտքերը շատ լավ են մարմնավորված նիկիտա Սերգեևիչ իրուշչովի հետևյալ խոսքում. «Այժմ, հորեկյանի այս օրը, մենք ժողովուրդների մեծ բնտանիքում, ազատ ու նոր բնտանիքում, հիշելով Տարաս Գրիգորևիչ Շեշենկոյին, կարող ենք ասել, որ այն երազանքները, որոնցով ապրում էր Շեշենկոն, կենսագործել ենք»:

Ուկրաինական ու հայ ժողովուրդների բազմադարյան պատմական բարեկամության մեջ Տարաս Շեշենկոյին պատկանում է այն տեղը, որ նվաճել է նա ժողովուրդների երջանկության ու բարօրության համար խոսքով ու գործով մղած անձնվեր պայքարով: Դրա համար էլ նա այժմ մեր սրտերում է ղեպի ապագան գիմոլ բոլոր ժողովուրդների սրտերում:

ТАРАС ШЕВЧЕНКО В АРМЯНО-УКРАИНСКИХ КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЯХ

Доктор филолог. наук С. Г. АРЕШЯН

(Р е з ю м е)

В статье освещается значение творчества великого украинского революционного демократа Тараса Шевченко в армяно-украинских культурных отношениях. Показывается общность революционно-демократических, гуманистических, эстетических взглядов Шевченко и Налбандяна, их одинаковое отношение к литературе и искусству, к национально-освободительному движению угнетенных народов. Специальный раздел статьи посвящен переводам произведений Шевченко на армянский язык, в особенности в советское время.